

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

2020թ.

թիվ _____/Ա/

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԻ ՇԱՐՔ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՇԱՐՔԱՅԻՆ ԿԱԶՄԻ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ 2020 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը **ո ր ո շ ու մ է.**

1. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2020 թվականի ամառային զորակոչից մինչև 2021 թվականի հունիսի 30-ը տալ տարկետում՝

1) Խաչիկ Մարտիկի Ասատրյանին՝ ծնված 2001 թվականի հուլիսի 4-ին (հաշվառման վայրը՝ ՀՀ Արմավիրի մարզ, Նորապատ համայնք, 5-րդ փող., 34 տուն), սովորում է ՀՀ Արմավիրի մարզի «Արմավիրի պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի 2-րդ կուրսում.

2) Էդգար Արմանի Դանիելյանին՝ ծնված 2001 թվականի ապրիլի 6-ին (հաշվառման վայրը՝ ՀՀ Կոտայքի մարզ, Բալախովիտ, Գ.Արշակյան թաղ., 1-ին փող., 2-րդ փակուղի, 3 շենք,9 բն.), սովորում է Երևանի «Հայ-ամերիկյան «Էրեբունի» պետական բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ի 3-րդ կուրսում.

3) Տիգրան Վարուժանի Ազարյանին՝ ծնված 2001 թվականի հունիսի 12-ին (հաշվառման վայրը՝ ՀՀ Լոռու մարզ, գ.Շնող, 3-րդ փող., 25/1 տուն), սովորում է Երուսաղեմի Հայոց Պատրիարքության ժառանգավորաց Վարժարանի 3-րդ դասարանում.

4) Հարություն Վլադիմիրի Կոչիբրոյանին՝ ծնված 2001 թվականի ապրիլի 15-ին, (հաշ-

վառման վայրը՝ ՀՀ Շիրակի մարզ, ք. Գյումրի, Հալաբյան փող., 13 շենք, 60 բն.) սովորում է ՀՀ Շիրակի մարզի «Ֆոտոն վարժարան» ՊՈԱԿ-ի 12-րդ դասարանում.

5) Նարեկ Սամվելի Վարդանյանին՝ ծնված 2001 թվականի հուլիսի 20-ին, (հաշվառման հասցեն՝ ք.Երևան, Հարավ-Արևմտյան թաղ., Շերամի փող., 5 շենք, 3 բն.), սովորում է Երևանի Փ.Թերլեմեզյանի անվան գեղարվեստի պետական քոլեջի 5-րդ կուրսում.

2. Շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2020 թվականի ամառային զորակոչից մինչև 2021 թվականի մարտի 1-ը տալ տարկետում՝

1) Անդրեյ Տիգրանի Եղիազարյանին՝ ծնված 2001 թվականի փետրվարի 28-ին (հաշվառման վայրը՝ ՀՀ Արարատի մարզ, ք. Մասիս, Նոր թղմ., 32 շենք, 18 բն.), սովորում է Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Ժառանգավորած Վարժարանի 4-րդ դասարանում.

2) Իվան Հակոբի Ադամյանին՝ ծնված 2001 թվականի հունվարի 11-ին (հաշվառման վայրը՝ ք. Երևան, Նորագավիթ, Արտաշատի խճղ., 38/5 տուն.), սովորում է Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Ժառանգավորած Վարժարանի 4-րդ դասարանում.

3) Վահագն Դավիթի Մկրտչյանին՝ ծնված 2001 թվականի ապրիլի 13-ին (հաշվառման վայրը՝ ք.Երևան, Դ.Անհաղթի փող., 1 շենք, 72 բն.), սովորում է Երուսաղեմի Հայոց Պատրիարքության Ժառանգավորած Վարժարանի 4-րդ դասարանում:

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

1. Իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

ՀՀ կառավարության որոշման նախագծում նշված ՀՀ քաղաքացիները սովորում են Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետությունում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով և չեն ավարտել պարտադիր հանրակրթական ծրագիրը:

2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները

Խաչիկ Մարտիկի Ասատրյանը, Էդգար Արմանի Դանիելյանը, Տիգրան Վարուժանի Ազարյանը, Հարություն Վլադիմիրի Կոչիբրոյանը և Նարեկ Սամվելի Վարդանյանը ուսումնառությունը ավարտելու են 2021 թվականի հունիսի 30-ին, իսկ Անդրեյ Տիգրանի Եղիազարյանը, Իվան Հակոբի Ադամյանը և Վահագն Դավիթի Մկրտչյանը՝ 2021 թվականի մարտի 1-ին:

Հիմք ընդունելով «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ մասը՝ առաջարկում են վերոհիշյալ ՀՀ քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2020 թվականի ամառային զորակոչից տալ տարկետում:

3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք

Նախագիծը մշակվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության կողմից:

4. Իրավական ակտի կիրառման դեպքում ակնկալվող արդյունքը

Իրավական ակտի ընդունումը թույլ կտա վերը նշված ուսանողներին ստանալ պարտադիր հանրակրթական կրթություն:

ՏԵՂԵԿԱՆՔ

«Հայաստանի Հանրապետության մի շարք քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2020 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի ընդունումը ՀՀ պետական եկամուտներում ու ծախսերում փոփոխություն չի առաջացնի:

ԻՐԱՎԱԿԱՆ-ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

«Հայաստանի Հանրապետության մի շարք քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2020 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագծի վերաբերյալ դիտողություններ և առաջարկություններ չկան:

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության

իրավաբանական վարչության պետի պարտականությունները կատարող՝

Արսեն Բաղդասարյան

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

	Առաջարկության հեղինակը	Առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխություն
1	<p>ՀՀ պաշտպանության նախարարություն 07.08.2020թ. N ՊՆ/510/2452-2020</p> <p>15.08.2020թ. N ՊՆ/510/2528-2020</p> <p>24.08.2020 թ. N ՊՆ/01/2631-2020</p>	<p>ՀՀ կառավարության նախագծում.</p> <p>1. նախագծի 1-ին կետի 2-րդ ենթակետում նշված Հ.Պապիկյանին ՀՀ կառավարության որոշմամբ տարկետում չի կարող տրամադրվել, քանի որ նրան տրվել է տարկետում մինչև 19 տարին լրանալու օրը /21.08.2020թ/:</p> <p>2.«Հայաստանի Հանրապետության մի շարք քաղաքացիներին շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2020 թվականի ամառային զորակոչից տարկետում տալու մասին» կառավարության որոշման նախագծում (ՊՆ պատասխան գրություն՝ ՊՆ/510/2449-2020 առ 07.08.2020թ.) Հարություն Վլադիմիրի Կոջիբրոյանին ընդգրկելու վերաբերյալ առարկություններ չունենք:</p> <p>ՊՆ/510/2328-2020 Նարեկ Սամվելի Կարդանյանին վերաբերյալ առարկություններ չունենք:</p>	<p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p> <p>Ընդունվել է</p>	<p>Կատարվել է համապատասխան փոփոխություն</p> <p>Կատարվել է</p> <p>Կատարվել է</p>
2.	<p>ՀՀ արդարադատության նախարարություն 12.08.2020թ. N 01/27.1/18046-2020</p>	<p>ՀՀ կառավարության նախագծում.</p> <p>1. 1-ին կետի 2-րդ, 3-րդ և 6-րդ ենթակետերում անհրաժեշտ է հստակեցնել քաղաքացիների</p>	<p>Ընդունվել է</p>	<p>Կատարվել է համապատասխան փոփոխություն</p>

		ծննդյան տարեթվերը: 2. Նախագծի 1-ին կետի 3-րդ ենթակետում «Լոռու» բառն անհրաժեշտ է փոխարինել «Լոռու» բառով:		
--	--	---	--	--